

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԿ



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

*Հետազոտության թեման՝ Նորագույն տեղեկատվական
տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի
հոգեբանական զարգացման գործում*

Առարկան՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Հայկուհի Սողոմոնյան

*Ուսումնական հաստատություն՝ Անտոն Չեխովի անվ հ.55
դպրոց*

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ-----3

Տեղեկատվական հասարակության ընդհանուր բնութագիրը-----4
-----4

**Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը երեխայի
հոգեբանական զարգացման վրա -----12**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ-----18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ-----19

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը: Տեղեկատվական հասարակության կազմավորման ու հատկապես մատաղ սերնդի ձևավորման հիմնախնդիրն ամենաքննարկվող թեմաներից է ժամանակակից սոցիալական փոփոխության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության և մանկավարժության մեջ: Աշխատանքի արդիականությունը նախ և առաջ կայանում է նրանում, որ այն մարդկության զարգացման ամենաերիտասարդ փուլն է: 21-րդ դարն իրավացիորեն անվանում են տեղեկատվական, քանի որ տեղեկատվությունը դառնում է մարդկության գլխավոր ռեսուրսը: 20-րդ դարի 50-60-ական թթ. մարդկությունը թևակոխեց մի դարաշրջան, որտեղ տեղեկատվությունը և տեղեկատվական գործիքները մարդու կենսակերպի հիմնական ու անբաժան մասն են դարձել: Մարդու գոյությունը տեխնոլոգիզացված աշխարհում դարձավ մի շարք հումանիտար գիտակարգերի ուսումնասիրության առարկա: Թերևս առաջին հերթին սրանով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Աշխատանքի նպատակն է.

Ուսումնասիրել նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում:

Աշխատանքի խնդիրներն են.

- Քննել տեղեկատվական հասարակության ընդհանուր բնութագիրը,
- Ներկայացնել տեղեկատվական տեխնոլոգիաների դերը ժամանակակից սովորողի հոգեկան նկարագրի ձևավորման գործում:

1. Տեղեկատվական հասարակության ընդհանուր բնութագիրը

Քաղաքակրթության զարգացումը կապված է մարդկային կարողությունների կատարելագործման հետ: Անընդհատ աճող կարիքները ստիպում են մարդկանց նոր միջոցներ գտնել դրանք բավարարելու համար: Սա վերաբերում է ոչ միայն ֆիզիկական գործընթացներին, այլև հոգևոր կյանքին: Այսպիսով, տեղեկատվական տեխնոլոգիաները ունակ են կատարել գործողություններ առավել հաճախ՝ թվային հաշվարկներ և տվյալների մանիպուլյացիայով, ազդել է տեղեկատվության հետ աշխատելու տեխնոլոգիաների վրա և ընդլայնել նման հիմնարար հասկացությունների ըմբռնման սահմանները ինչպիսիք են մտածողությունը, գիտելիքը, հաղորդակցությունը: Այսպիսով, նորարարական տեխնոլոգիաները և դրանց գործարկման համար անհրաժեշտ ծրագրաշարի մշակումը ազդեցին մարդու զարգացման վրա, որի հիմքում էլ ընկած է անձի բնական փոփոխության գործընթացը որպես անհատի նոր սոցիալական որակ:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները միջազգային պրակտիկայում հասկացվում են որպես տեխնոլոգիաներ, որոնք ուղղված են տեղեկատվության ստացմանը, պահպանմանը, մշակմանը, փոխակերպմանը, ներկայացմանը և փոխանցմանը: «Տեղեկատվական տեխնոլոգիան» ընդհանուր հասկացություն է, որը նկարագրում է համակարգչային տեխնիկայի վրա հիմնված տվյալների մշակման տարբեր մեխանիզմներ, սարքեր, ալգորիթմներ, մեթոդներ:

Տեղեկատվական հասարակության բնութագրիչներից են՝

1. տեղեկատվության, գիտելիքի և տեղեկատվական տեխնոլոգիաների դերի մեծացումը հասարակական կյանքում,
2. տեղեկատվական տեխնոլոգիաների, ապրանքների ու ծառայությունների, ինչպես նաև հաղորդակցության ոլորտներում աշխատող մարդկանց թվի աճը,
3. հասարակության տեղեկատվայնացման (informatization) աճը՝ հեռախոսակապի, ռադիոյի, հեռուստատեսության, համացանցի, ավանդական ու էլեկտրոնային զանգվածային լրատվության միջոցների (ՉԼՄ) կիրառմամբ,
4. գլոբալ տեղեկատվական միջավայրի զարգացումը, որն ապահովում է մարդկանց արդյունավետ տեղեկատվական փոխգործակցությունը,
5. տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը արտադրության, կազմակերպությունների գործունեության, կրթության ու կենցաղի մեջ (տեխնոլոգիական բնութագրիչ),

6. տեղեկատվության՝ իբրև կենսամակարդակի բարձրացման կարևոր խթան լինելը, նաև՝ տեղեկատվության լայնամասշտաբ կիրառումը, որի շնորհիվ ձևավորվում է տեղեկատվական գիտակցություն (սոցիալական բնութագրիչ),
7. տեղեկատվությունը իբրև տնտեսական գործոն՝ ռեսուրս, ծառայություն, ապրանք, ինչպես նաև՝ ավելացված արժեքի ու զբաղվածության աղբյուր (տնտեսական բնութագրիչ),
8. տեղեկատվության ազատությունը, պայմանավորված հասարակության տարբեր շերտերի անող մասնակցությամբ և փոխհամաձայնությամբ (քաղաքական բնութագրիչ),
9. տեղեկատվության մշակութային արժեքի ճանաչումը՝ անհատի և հասարակության զարգացման համար տեղեկատվական արժեքների հաստատման աջակցության միջոցով (մշակութային բնութագրիչ)¹:

Ժամանակակից տեղեկատվական հասարակության միտումների համակարգային վերլուծություն է ներկայացնում հայտնի տեսաբան Մանուել Կաստելյը: Իր «Տեղեկատվական դարաշրջան» եռահատոր աշխատության մեջ նա հանգամանորեն վերլուծել է քաղաքակրթական հիմնարար գործընթացները, որոնք հարուցվել են տեղեկատվական տեխնոլոգիաների սկզբունքորեն նոր դերակատարությամբ: Տեղեկատվական տեխնոլոգիաների մեջ տեղի ունեցող հեղափոխությունը նրա կարծիքով նոր տնտեսության, հասարակության և մշակույթի կայացման հետ կապված բազմաբնույթ բարդությունների վերլուծության սոցիալփիլիսոփայական մեկնակետն է²: Մ.Կաստելյը ընդգծել է, որ հասարակությունը չի կարող հասկացվել կամ նկարագրվել առանց իր տեխնոլոգիական բազիսի: Մինևույն ժամանակ Կաստելյը շեշտում է նաև այն միտքը, որ տեխնոլոգիան ամբողջությամբ չի որոշում ժամանակակից հասարակության պատմական էվոլյուցիան, և որ սոցիալական փոփոխությունները, տեխնոլոգիան հասարակության զարգացման ռեսուրսային ներուժն է, որն ակտիվորեն ներագրում է սոցիալական փոփոխությունների ծավալման ուղղությունների վրա: Հասարակությունն իր շարժընթացի ռազմավարական ուղու ընտրության հարցում, այնուամենայնիվ, նշանակալի չափով ազատ է: Մ.Կաստելյի տեսակետն այս հարցում համընկնում է Դ.Բելի կարծիքի հետ: Սակայն, կայացող նոր հասարակության մեջ Մ.Կաստելյի

¹ Քալանթարյան Է., տեղեկատվական հասարակությունը որպես արդյունավետ կառավարման երաշխիք, Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու 2018թ.// <http://ysu.am/files/lratu-279-284.pdf>, 14.09.2022:

² Кастельс М. Информационная эпоха: экономика, общество и культура. Москва, 2000, стр. 28.

կարծիքով արտադրության արմատական փոխակերպման գործոնը, որը նրա ըմբռնմամբ հիմնականում համակարգչային տեխնոլոգիաների զարգացումն է, վճռորոշ ազդեցություն է ունենում իշխանության, առհասարակ սոցիոմշակութային ոլորտի վրա: Տեղեկատվական տեխնոլոգիաները որակապես մի նոր մակարդակի են բարձրացնում գիտելիքների և տեղեկատվական գործընթացների նշանակությունը: Այդ մասին նշել են նաև Դ.Բելը, Ա.Տուրենը, Է.Թոֆլերը և պոստիմդուստրիալիզմի մյուս նշանավոր տեսաբանները: Մ.Կաստելյը յուրովի է բնութագրում տեղեկատվական հասարակության տեսությունը՝ որպես «ինֆորմացիոնալ հասարակության» (informational society) հայեցակարգ՝ ի տարբերություն հիշատակված հեղինակների՝ «տեղեկատվական հասարակության» (information society) հայեցակարգի: Մ.Կաստելյի կարծիքով տեղեկատվությունը և դրա փոխանակումն ուղեկցել են քաղաքակրթության զարգացմանն իր բոլոր փուլերում: Միևնույն ժամանակ այսօր ծնունդ առնող «տեղեկատվական հասարակությունը կառուցվում է այնպես, որ տեղեկատվության ձևավորումը, վերամշակումը և փոխանցումը դառնում են արտադրողականության աճի և իշխանության փոխակերպման հիմնարար աղբյուրները»³:

Հայտնի ռուս փիլիսոփա Ա. Ուրսուլի բնորոշմամբ տեղեկատվայնացումը հասարակության կողմից տեղեկատվության՝ որպես զարգացման ռեսուրսի առավել լիարժեք տիրապետման բարդ և հակասական գործընթաց է, որը նպատակաուղղված է մարդկային քաղաքակրթության մտավոր ներուժի դերի բարձրացմանը, տեղեկատվական հասարակության կայացմանը և նոոսֆերայի հաշորդական աստիճանների կազմավորմանը⁴: Տեղեկատվայնացումը՝ որպես սոցիոմշակութային և տեխնոլոգիական փոխակերպման համալիր գործընթաց, համակողմանիորեն նպաստում է մարդու, իսկ նրա հետ միասին նաև հասարակության սոցիալ-տնտեսական, գիտատեխնոլոգիական և հոգևոր զարգացմանը:

Տեխնոլոգիական հեղափոխության հետևանքով ձևավորված հասարակությունը ձևավորվել է գլոբալ սոցիալական հեղափոխության հետևանքով և այս հասարակությունում գիտելիքը դառնում է մարդու, սոցիումի ու հասարակության կայացման կարևոր պայման, այսինքն մարդկությունն ընթանում է գիտելիքահենք անհատի և հասարակության կերտման ճանապարհով: Նոր տեխնոլոգիաների պայամաններում զարգանում է կոսմոպոլիտան, ազատ մարդու հայեցակարգը: Մրան է նպաստում նաև էլեկտրոնային հեռահար կրթության համակարգի ներմուծումը: Երբ

³ Նույն տեղում, էջ 42

⁴ Урсул А.Д. Переход России к устойчивому развитию. Ноосферная стратегия. Москва, 1998, стр. 341:

անգամ Աֆրիկայն հեռավոր գյուղերից մարդիկ կարող են կրթություն ստանալ եվրոպական նշանավոր ԲՈՒՀ-երում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների տված լայն հնարավորությունները, որոնք առաջին հերթին վերաբերում են մարդուն, նրա ժամանակի ու տարածության մատչելի տնօրինմանը, հաղորդակցումը կորցրել է իր տարածական էությունը: Սա բնականաբար նպաստում է մշակույթների ու արժեքների սերտանմանը, ինչը չի կարող իր ազդեցությունը չունենալ առանձին պետությունների ճակատագրերի վրա: Այս է պատճառը, որ տեղեկատվական հասարակության հիմնախնդիրներով զբաղվող բազմաթիվ տեսաբաններ առաջին հերթին խոսում են այն մասին, որ ի վերջո տեղեկատվական հասարակության ձևավորումը տանում է մարդկության պատմության մի նոր փուլի, որտեղ այլևս պետությունները դադարում են բարձր արժեք լինելուց և գոյի միակ ու իրական հիմք է դառնում մարդը: Սակայն, հենց ինքը՝ մարդը, մեծապես արժեքային բախումների է գնում տեխնոլոգիական թռիչքաձև զարգացման արդյունքում:

Չարգանալով աննախադեպ արագությամբ՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները նվաճել են մեր կյանքի բոլոր ոլորտները մարդկանց ընդամենը մեկ սերնդի կյանքի ընթացքում լուրջ փոփոխությունների տանելով հասարակական համակարգերը: Հետևաբար, առաջացան մի շարք հոգեբանական խնդիրներ կապված անհատի զարգացման հետ, որը պահանջում է հոգեբանության և մանկավարժության տարբեր ոլորտների տեսական ըմբռնում և ինտեգրում: Այս խնդիրները ներառում են ինչպես համակարգչի հետ մարդու փոխազդեցության բացասական կողմերը, այնպես էլ դրանից բխող հոգեբանական հակումները, համակարգչային գերբեռնումը և համակարգչային ինքնագործունեությունը, ինչպես նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ազդեցության դրական կողմերը մարդու մտավոր գործունեության վրա:

Համակարգչից օգտվելու սկզբնական փուլում հոգեբանական խնդիրները կապված են եղել մարդու կողմից նոր տեխնոլոգիաների մշակման հետ. ուսումնասիրվել է համակարգչի նմանակման կամ «անիմացիայի» ֆենոմենը, համակարգչի հետ «հաղորդակցության» անհրաժեշտությունը և նման

հաղորդակցության առանձնահատկությունները, համակարգչային անհանգստության այնպիսի ձև, ինչպիսի է ներխուժումը մարդու ներաշխարհ⁵:

Հետագայում գիտնականները ուշադրություն հրավիրեցին նաև այնպիսի խնդիրների վրա, որոնք առաջանում են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման ժամանակ՝ պատասխանատվություն, կիրեռահանցագործություններ, էնտուզիազմ կամ այսպես կոչված, «Ուելդի սինդրոմը»՝ համակարգչային կախվածության տհաճ «կողմնակի էֆեկտ», որը, ինչպես բոլոր կախվածությունները, դժկամությամբ է շտկվում⁶: Գիտական աշխատություններում նկարագրվել են նաև անհատականության զարգացման վրա տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ազդեցության դրական կողմերը: Օրինակ՝ համակարգիչը կարող է կատարել հոգեբանական օգնության կամ ուսուցման ֆունկցիա՝ սովորեցնելով խնդիրների լուծման ուղիներ:

Այնուամենայնիվ, այսօր գնալով ավելի մեծ ուշադրություն է հրավիրում այն հարցը, թե ինչպես է համակարգչի հետ փոխազդեցությունն ազդում մարդու զարգացման վրա. դա նպաստո՞ւմ է անձի ավելի ներդաշնակ զարգացմանը, թե՛, ընդհակառակը, դանդաղեցնում և հետաձգում է այն:

Գիտնականները համակարգչի հետ երկարատև շփված մարդկանց մոտ հայտնաբերել են այնպիսի հոգեբանական գծեր, ինչպիսիք են նպատակներին հասնելու համառությունն ու հաստատականությունը, անկախությունը, բավականին բարձր ինտելեկտը, ստեղծագործական գործունեության հակումը: Միևնույն ժամանակ, նման մարդիկ նախապատվությունը տալիս են աշխատանքային գործընթացին, ինտրովերտ են, խորասուզվում են սեփական փորձի մեջ, սառնություն են ու անզգայուն շփման մեջ, կարեկցանքի զգացողությունը բացակայում է, կոնֆլիկտների հակում ունեն, էգոցենտրիկ են և անպատասխանատու: Ճիշտ է, անհնար է միանշանակ ասել, որ անհատականության այս հոգեբանական գծերը ձևավորվում են համակարգչի հետ երկարատև շփման արդյունքում, գուցե պարզապես համակարգիչը ավելի շատ գրավում է որոշակի բնավորության գծեր ունեցող մարդկանց կամ պարզապես ընդգծում է դրանք:

⁵ Бабаева, Ю.Д., Войскунский, А.Е., Кобелев В.В., Тихомиров О.К. Диалог с ЭВМ: психологические аспекты/Бабаева Ю.Д., Войскунский А.Е. //Вопросы психологии. 1983. – № 2.

⁶ Шнейдерман, Б. Человеческие ценности и будущие технологии (Декларация ответственности) // Психол. журн. – 1992. Т. – 13. – № 3. – С. 64- 69.

Կրթության ինֆորմատիզացիայի նպատակներից մեկը տեղեկատվական հասարակության՝ տեղեկատվության հսկայական քանակի պատճառով հիմնական հակասության վերացման անհրաժեշտությունն է, որը ժամանակակից մարդուն պետք է մղի հասարակության մեջ հաջող հարմարվելու: Տեղեկատվության առատության պայմաններում համակարգիչը լրացնում է տեղեկատվության մշակման մարդու հնարավորությունները՝ մեծացնելով դրա ծավալն ու արագությունը: Համակարգչի հետ մեկտեղ մարդն ավելի շատ, ավելի արագ և, միգուցե, ավելի ճշգրիտ է մշակում տեղեկատվությունը, բայց ժամանակակից տեխնոլոգիական միջոցները հնարավորությունների մշակման գուտ քանակական աճ է ապահովում:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ազդեցության տակ մարդը սկսեց այլ կերպ մտածել: Եթե նախկինում մտածում էր տեքստով, ապա այժմ ավելի ու ավելի շատ պատկերներ, նկարներ: Մենք նախկինում «գրքի մարդիկ» էինք, հիմա դարձել ենք գրաֆիկայի մարդիկ⁷: Երեխայի երևակայությունը գնալով աղքատանում է, երեխան դադարում է երևակայել:

Նոր դարաշրջանում ցանկացած օգտատեր ունի ազատ մուտք դեպի տեղեկատվություն, գիտելիք, ինչը ինֆորմատիզացիայի դարաշրջանում տեղափոխվում է նոր որակական և քանակական մակարդակ: Միևնույն ժամանակ, առաջանում են այլ տեսակի խնդիրներ. առաջանում է մեծ քանակությամբ ավելորդ տեղեկատվություն, ինչը դժվարացնում է գիտելիքներ ձեռք բերելը, և կարող է հանգեցնել հիպերհիդումների, գովազդի հեղեղումների, սպամի, տեղեկատվության աղբյուրի և որոնման ազատության՝ հեռու սկզբնական նպատակից:

Ակնհայտ է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման հոգեբանական մեկ այլ ասպեկտ՝ տեղեկատվության ակնհայտ համընդհանուր հասանելիությունը հանգեցնում է գիտելիքների դեգրադացմանը: Ինչու՞ կարդալ, հաշվել կամ անգիր անել, երբ ցանկացած պահի կարող ես մտնել ինտերնետ և գտնել բոլոր հարցերի պատասխանները:

Սա ավելի ու ավելի հաճախ կոչվում է տեխնոլոգիական առաջընթաց և հասարակության ինֆորմատիզացիա: Փոխվում են մարդու ստեղծագործական գործունեության պահանջները՝ արտադրության և սոցիալական ոլորտի զարգացման բարձր տեմպերը, կատաղի մրցակցությունը, ձևավորում են «ստեղծագործ մարդու»

⁷ Грановская, Р. Нам сейчас как никогда нужен творческий прорыв. <https://gazeta.eot.su/article/nam-seychaskak-nikогда-nuzhen-tvorcheskiy-proryv>, 08.09.22.

պահանջարկ: Սահմանափակելով իրենց հետաքրքրությունները արվեստի էլեկտրոնային ձևերով, հաղորդակցությամբ՝ ուսանողները կարող են պատշաճ ուշադրություն չդարձնել ավանդական տեխնոլոգիայի զարգացմանը:

Տեղեկատվական տեխնոլոգիաները փոխում են մարդկանց միջև միջանձնային հաղորդակցության բնույթը՝ բոլորովին նոր հնարավորություններ սահմանելով դրանց համար, փոխակերպում են նրա գործառույթները.

1) հաղորդակցական - տեղեկատվության փոխանակումը դառնում է ավելի կատարյալ և պարզ,

2) ինտերակտիվ - գործընկերների փոխազդեցությունը չի սահմանափակվում ավանդական իմաստով պարզ խոսակցություններով, հնարավոր է դառնում գնահատականներ տալ, ուղղել սխալները և ապահովել մարդկանց միջև անուղղակի հաղորդակցություն,

3) ընկալողական՝ մեծացնում է գործընկերների կողմից միմյանց ընկալումն ու իմացությունը՝ միաժամանակ ապահովելով հաղորդակցության անանունությունը:

2. *Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը երեխայի հոգեբանական զարգացման վրա*

21-րդ դարն իրավամբ անվանվում է ինֆորմացիոն դարաշրջան: Մենք ապրում ենք հասարակության տեխնոկրատիզացիայի ակտիվ զարգացման մի դարաշրջանում, որ էապես փոխակերպում է մարդու հոգեբանությունը: Ծատ ծնողների համար լարված աշխատանքային օրվա ընթացքում ուղղակի փրկություն է, որ երեխաները ինչ-որ բանով զբաղված են, չեն խանգարում, չեն աղմկում, ոչինչ չեն խնդրում, չեն ու չեն անհանգստանում իրենց հարցերով, Համակարգիչը, հեռուստացույցը ամուր հաստատված են ժամանակակից ընտանիքներում ու շատ երեխաների կյանքում՝ դեռ վաղ մանկության հասակից սկսած: Այսօր սովորական է դարձել երեխային էկրանի առջև կերակրելը, աուդիոհեքիաթների ու երգերի տակ քնեցնելն ու կապույտ էկրակի

առջև ժամերով մուլտֆիլմի գամելը: Ցավոք, ժամանակակից երեխայի կյանքում տատիկի, պապիկի, հայրիկի ու մայրիկի հետ զրույցները գնալով ավելի ու ավելի սակավ են դառնում: Հատկապես ժամանակակից նուկլեար՝ միաբջիջ ընտանիքներում, որ փոքրացել է ընտանիքի՝ որպես սոցիալական ինստիտուտի ու երեխայի առաջին սոցիալիզացիայի դպրոցի օրգանական կազմը, հաղորդակցությունը ծնող-երեխա, կին-տղամարդ և այլն դարձել է խիստ միավանկ ու լակոնիկ: Բացի այդ նաև հաճախ շենքերի բակերում կարելի է տեսնել երեխաների, որ թեն իրար մոտ են ու առերևույթ դուրս են եկել միմյանց հետ հաղորդակցվելու, բայց խորասուզվել են համակարգչի մեջ ու իրար չեն էլ նկատում: Մինչդեռ խաղն ու միմյանց հետ շփումը նպաստում է աշխարհի ու շրջապատող իրականության բացահայտմանը, զարգացնում է երևակայությունը, հուզական կապ է ստեղծում միմյանց միջև, զարգանում է պատասխանատվության զգացում, միմյանց նկատմամբ հոգատար ու ուշադիր լինելու պատրաստակամություն: Հեռուստատեսության ու համակարգչի հետ շփումը երեխայի մոտ զարգացնում է պասիվություն, նա դառնում է զգացմունքներից զուրկ, կորցնում է իրականության ընկալումը, հեռանում աշխարհաճանաչողության ու սեփական փորձով բացահայտումներ անելու անչափ կարևոր ուղղուց: Անկասկած, կապույտ էկրանը նաև ունի բազմաթիվ առավելություններ, որի ճիշտ և գիտակից օգտագործումը կարող է նպաստել մտահորիզոնի ընդլայնմանը, մտածական հմտությունների զարգացմանը, արժեհամակրգային կրթությանը արմատավորմանը և այլն:

Եթե մենք՝ մեծահասակներս, գտում ենք «կապույտ» էկրաններից ստացած տեղեկատվությունը, ապա երեխաները, իրենց անփորձության պատճառով, չեն անում դա, այլ հավատում են այն ամենին, ինչ տեսնում կամ լսում են և սպունգի պես կլանում են ցանկացած տեղեկություն: Հենց վաղ մանկության շրջանում դրվում է բարոյական համոզմունքների, խղճի, կարեկցանքի հիմքը և շատ կարևոր է բաց չթողնել այս պահը: Վերադաստիարակումը շատ ավելի դժվար է, քան կրթելը⁸:

Նախ ներկայացնենք ժամանակակից տեխնոլոգիական զարգացման առավելություններն ու թերությունները նոր սերնդի հոգեկերտվածքի ձևավորման գործում:

Առաջին հերթին «կապույտ» էկրանը առողջական լուրջ խնդիրների կարող է հանգեցնել, ինչպիսիք են տեսողական խնդիրները, նյութափոխանակության

⁸ «Влияние телевидения и компьютера на развитие ребёнка», <https://osafpro.ru/vred-kompyutera-i-televizora-dlya-detey>, հասանելի է

խանգարումներ, որոնք էլ իրենց հերթին կարող են գիրության, սրտանոթային համակարգի խանգարման, իմունիտետի թուլացման պատճառ հանդիսանալ: Բացի այս մտավոր ու հուզական բազմաթիվ խնդիրներ կարող են ի հայտ գալ երեխայի զարգացման առավել ուշ փուլում: Մասնավորապես, նյարդային համակարգի, հուզական ու մտավոր:

Վաղ մանկության տարիներին, երկար ժամանակ կապուտ էկրանի առջև անցկացնող երեխան չի կարողանում կառավարել իր հույզերը, գրգռված է իրականությունը չի ընկալում, ունի խոսքի հապաղման կամ որ ավելի վատ խանգարման լուրջ խնդիրներ: Երեխան, ինչպես գիտենք, լավագույնս կրկնում է իրեն շրջապատողների վարքը և բնական է, որ կրկնի այն ինչ տեսել է էկրանից այն կողմ:

Վերջին շրջանում լայն տարածում են ստանում մանկական բլոգները, որտեղ հերոսները խաղում են ամենատարբեր ու բազմաբնույթ խաղալիքներով, կախարդական փայտիկի օգնությամբ ստանում են սրտի ուզածը, այցելում լավագույն վայրեր, կախարդական փայտիկի օգնությամբ ճանապարհորդում, ուտում ոչ առողջարար սնունդ, ստանում իրենց սրտի հաճույքը: Այս վարքը ևս, բնականաբար, ընդօրինակվում է երեխաների կողմից: Նրանք կոցնում են հեքիաթի ու իրականության սահմանները, ընատինիքի առջև դնում միևնույն պահանջներն ու չստանալով դառնում ագրեսիվ ու խիստ հուզական, երբեմն նաև անկառավարելի:

Համակարգիչն ու հեռուստացույցը երեխաներից խլում են նրանց մանկությունը. Չրկում են նրանց ակտիվ խաղերից, փորձառություններից, իրական հույզերից և զգացմունքներից: Հասակակիցների և ծնողների հետ հաղորդակցվելու, շրջապատող կենդանի աշխարհի միջոցով սովորելու փոխարեն, երեխան ժամեր, կամ նույնիսկ օրեր է անցկացնում հեռուստացույցի և համակարգչի մոտ՝ զրկելով իրեն զարգացման այն հնարավորությունից, տրվում է մարդուն միայն մանկության տարիներին:

Առավել հասուն մանկության շրջանում համակարգչային խաղերով տարվածությունը կարող է երեխայի մոտ մանկական վախերի պատճառ դառնալ, ժամանակի սխալ կառավարումը, վիրտուալ իրականության կլանումը կարող են հանգեցնել ընդհուպ մինչև թերսնուցում ողնաշարի խնդիրներ հուզականային ոլորտի անկայունություն ու անլիարժեքություն: Անընդհատ վիրտուալ իրականությունում ապրող երեխան դժվարանում է իրական հարաբերություններ կառուցել հասակակիցների հետ, քանի որ և՛ ֆիզիկապես, և՛ հոգեպես հետ է մնում նրանից:

Գեռահասության տարիքում համակարգչային կախվածությունը կարող է հանգեցնել կեղծ իրականության, կեղծ արժեքների աշխարհում ապրելուն: Երբ դու քո ստեղծած ավատարի կերպարն ես, ունես գեղեցկության քո երագած չափանիշները, բայց այն հեռու է իրականին մոտ լինելուց: Վիրտուալ աշխարհում դու գնահատված, լաված ու արժևորված ես որոշակի հարաբերությունների տիրույթում, իսկ իրականում անտեսված ու չնկատված: Այս ամենի արդյունքում երեխայի մոտ կարող է ձևավորվել թերարժեքություն, անինքնավստահություն, մենակության զգացում, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել մեկուսացման, հոգեկան անհավասարակշռության ընդհուպ ինքնասպանության:

Այսօր արդեն գաղտնիք չէ, որ ժամանակակից հասարակության տեղեկատվության հիմնական աղբյուրներն են անհատները, իշխանական կառույցները, ՁԼՄ-ների ինստիտուտը, որոշակի շահեր հետապնդող խմբերը (կուսակցություններ, շարժումներ, հասարակական կազմակերպություններ և այլն), հավատքի, մշակույթի, կրթության, գիտության ինստիտուտները⁹: Թվարկված բոլոր խմբերի տեղեկատվության փոխանցման հիմնական տեխնիկական միջոցը մեդիան է ժամանակակից տեխնոլոգիաներն են¹⁰:

Եթե նախքան տեխնոլոգիական զարգացումը մարդկանց հոգևոր և նյութական պահանջմունքները ձևավորվում էին օբյեկտիվ գործոնների ազդեցությամբ (սոցիալական հնարավորություններ, միջավայր), ապա հիմա պահանջմունքները կարող են ձևավորել նաև զագվածային լրատվամիջոցները, հեռուստատեսությունն ու համակարգիչը¹¹: Ավելին՝ մեդիաները նաև արժեքներ ձևավորող գործոններ են, իսկ արժեքային համակարգը համարվում է «կրիտիկական ենթակառուցվածք», որի պաշտպանությունը յուրաքանչյուր պետությունում ընտանիքից սկսած մինչև ազգային անվտանգություն և այլ պետական ինստիտուտներ, կարևորագույն խնդիրներից է¹²:

Գերմանացի փիլիսոփա Գեորգ Վիլհելմ Փրիդրիխ Հեգելը թերթերի ընթերցումն անվանել է «ժամանակակից մարդու առավոտյան աղոթք»¹³: Այսօր սովորական մարդն առավոտյան դիմում է ոչ թե Աստծուն, այլ համակարգչին, հեռուստատեսությանը,

⁹ Кравченко А., Общая социология, М., «Юнист», 2002 г., с. 174.

¹⁰ Միրաքյան Վ., Սոցիալական դիրքորոշում ների ձևավորումը զանգվածային լրատվամիջոցներով, Ե., ԵՊՀ հրատ., էջ 64:

¹¹ Мудрик А., Социализация человека, М., «МПСИ», 2011 г., с. 504.

¹² Հարությունյան Գ., Բնտեգրացիայի որոշ հիմնախնդիրների մասին արժեքային համակարգի համատեքստում, Գլոբուս, #4(37), 2013 թ., էջ 20:

¹³ Игюлкин А., Пресса как оружие власти // Россия XXI, 1995, N 11, с. 68-86.

ռադիոյին, թերթին: Սակայն Հեգելի համեմատության իմաստն ավելի խորն է. աշխարհիկացված հասարակության մեջ տեխնիկական միջոցները ոչ այնքան աշխարհի վերջին նորություններն են հայտնում, որքան ընդհանուր տրամադրվածություն, կյանքի տոնուս, արժեքա-իմաստային կողմնորոշում են հաղորդում: Հենց ինովացիոն տեխնոլոգիաների միջոցով է կարգավորվում սոցիալական ու քաղաքական վարքը, հաղորդվում կյանքի բարոյական ու հոգեբանական երանգը, փոփոխվում կամ ամրապնդվում են ընկալման կարծրատիպերն ու արձագանքները¹⁴: Այս մանիպուլյատիվ հնարքներին ենթարկվում են անգամ մեծահասակները, խեղաթյուրվում է անգամ հասուն մարդու հոգեբանությունը, ուր մնաց էլ մանկահասակ երեխայինը:

Ի՞նչ անել, որպեսզի համակարգիչը և հեռուստացույցը կարևոր տեղ չգրադեցնեն փոքրիկի կյանքում և չխաթարեն նրա մանկությունը:

- Կատարյալն այն է, որ մինչև երեք տարեկան երեխաները չպետք է հեռուստացույց դիտեն,

- Դպրոցական տարիքի երեխաները պետք է հստակ ժամային գրֆիկ ունենան, թե որքան ժամանակ կարող են անցկացնել հեռուստացույցի առջև

Առողջ 3-4 տարեկան երեխաները կարող են հեռուստացույց դիտել 15 րոպե, 5-6 տարեկան երեխաները՝ 30 րոպե, տարրական դպրոցի սովորողները՝ 1-1,5 ժամ շաբաթական 2-3 անգամ¹⁵:

- Փիլմերն ու մուլտփիլմերը որ պետք է առաջարկվեն երեխային, ցանկալի է, որ նախապես դիտի մեծահասակը:

- Առաջին բանը, որ կարելի է անել, իրատեսական նպատակ դնելն է, ու դրան խստորեն հետևելը օրինակ՝ օրական երկու կամ երեք մուլտֆիլմ դիտել:

Դեռահասության տարիքում, միջին դպրոցում ավագ դպրոցում, բնականաբար մեծանում է երեխայի ինքնուրույնությունը, սակայն այս շրջանում ևս, հատկապես միջին դպրոցում երեխային պետք է տալ հնարավորություն՝ օգտվելու տեխնիկական միջոցներից, բայց պետք է դա անի ծնողների խիստ վերահսկողության ներքո: Երեխան պետք է հնարավորություն ունենա իմանալ տեսնել այն ամենը, ինչ իրեն հետաքրքրում

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ «Влияние телевидения и компьютера на развитие ребёнка», <https://osafpro.ru/vred-kompyutera-i-televizora-dlya-detey>, հասանելի է

է, բայց նաև պետք է դա ծնողի հետ քննարկելու հնարավորություն ու ազատություն ունենա: Մեծահասակը այս դեպքում պետք է ոչ թե գուտ արգելքներ դնողի դերում լինի, այլ պետք է կարողանա իր խորհուրդներով հնարավորություն տա ծանրութեթև անելու, տեսածը քննարկելու և այն իրականության դաշտ բերելու:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետք է նկատի ունենալ, որ համակարգիչները միայն արժեքավոր գործիք են նրանց համար, ովքեր ունեն որոշակի գիտելիքներ: Ինտերնետային հաղորդակցությունը չի կարող փոխարինել մարդկանց կենդանի երկխոսությանը, վերարտադրել մարդու անձնական ներկայության էֆեկտը և անհատական մոտեցում ցուցաբերել: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները վաղուց նորարարական գործիքից վերածվել են անհրաժեշտության: Դրանք բարելավում են մարդու զարգացումը, բարձրացնում նրա գործունեության արդյունավետությունն ու որակը, սակայն դրանք օգտագործումը հաճախ հանգեցնում է որոշակի հոգեբանական խնդիրների, որոնք պետք է իմանալ և հաշվի առնել՝ մարդու զարգացման վրա բացասաբար չազդելու համար:

ԽՍՀՄ փուլումից հետո հետխորհրդային երկրները պետականաշինություն իրականացրեցին, նոր արժեհամակարգի, սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունների ձևավորման պայմաններում, որոնք հենված էին շուկայական տնտեսության, կապիտալիզմի, սպառողականության մշակույթների տարրերի ներարկման և դրանց յուրովի ընկալման վրա: Որպես հետևանք, կերպարները, հերոսները, բարոյականությունը, լավ դրական մ առանձին դեպքերում ժամանակակից տեղեկատվական միջոցներում նույնացվեցին հակաարժեքների հետ: Ուստի անչափ կարևոր է երեխայի հետ անընդհատ իր իրականությունը, տեսձն ու լսածը քննարկելը: Սա, իհարկե, վերաբերում է ավելի հասուն տարիքին: Վաղ մանկության շրջանում ժամանակակից տեղեկատվական միջոցները դրական ոչինչ չեն տալիս ու միայն կարող են հանգեցնել մտավոր ու հոգեբանական զարգացման հապաղման: Այս տարիքում անհրաժեշտ է մաքսիմալ կրճատել երեխայի հաղորդակցությունը տեխնիկական միջոցների հետ՝ ի առավելություն իրական սպրումներին ու հաղորդակցությանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հարությունյան Գ., Ինտեգրացիայի որոշ հիմնախնդիրների մասին արժեքային համակարգի համատեքստում, Գլորուս, #4(37), 2013 թ
2. Միրաքյան Վ., Սոցիալական դիրքորոշում ների ձևավորումը զանգվածային լրատվամիջոցներով, Ե., ԵՊՀ հրատ.;
3. Քալանթարյան Է., տեղեկատվական հասարակությունը որպես արդյունավետ կառավարման երաշխիք, Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու 2018թ.// <http://ysu.am/files/lratu-279-284.pdf>, 14.09. 2022:
4. Бабаева, Ю.Д., Войскунский, А.Е., Кобелев В.В., Тихомиров О.К. Диалог с ЭВМ: психологические аспекты/Бабаева Ю.Д., Войскунский А.Е. //Вопросы психологии. 1983. – № 2.
5. Кастельс М. Информационная эпоха: экономика, общество и культура. Москва, 2000.
6. Кравченко А., Общая социология, М., “Юнист”, 2002 г.
7. Урсул А.Д. Переход России к устойчивому развитию. Ноосферная стратегия. Москва, 1998.
8. Шнейдерман, Б. Человеческие ценности и будущие технологии (Декларация ответственности) // Психол. журн. – 1992. Т. – 13. – № 3.
9. Кастельс М. Информационная эпоха: экономика, общество и культура. Москва, 2000.
10. Грановская, Р. Нам сейчас как никогда нужен творческий прорыв. <https://gazeta.eot.su/article/nam-seychaskak-nikogda-nuzhen-tvorcheskiy-proryv>, 08.09.22.
11. «Влияние телевидения и компьютера на развитие ребёнка», <https://osapro.ru/vred-kompyutera-i-televizora-dlya-detey>, հասանելի է